ՏԵՂԵԿԱՆՔ

Երևան քաղաքի ավագանու

2023 թվականի սեպտեմբերի 17-ի

ընտրությունների

նախընտրական քարոզչության ժամանակահատվածի

դիտարկման արդյունքների վերաբերյալ

|օգոստոսի 23 - սեպտեմբերի 13, 2023թ.|



ԱԿԱՆԱՏԵՍ
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Երևան 2023

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ՏԵՂԵԿԱՆՔ

Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների

նախընտրական քարոզչության ժամանակահատվածի

դիտարկման արդյունքների վերաբերյալ

(օգոստոսի 23 - սեպտեմբերի 12, 2023թ.)

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Ականատես» դիտորդական նախաձեռնությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական Միության տեսակետները:

Երևան
Սեպտեմբեր 15, 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 3
ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 4
Ընտրական հանձնաժողովներ 4
Կենտրոնական ընտրական հանձնաժողով 4
Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ 4
ԸԸՀ-ների կազմ 5
Աշխատանքային պայմաններ և հասանելիություն 6
Նիստեր 6
Տեղամասային ընտրական հանձնաժողովներ 7
ՏԸՀ-ների կազմ 7
ՏԸՀ անդամների վերապատրաստում 8
Ընտրողների հաշվառում, ընտրողների ցուցակներ 8
Ընտրողների հաշվառում 9
Խնդրահարույց հասցեներ 12
Մասնակից քաղաքական ուժեր 14
Ընտրական ցուցակներ 14
Ընտրական ցուցակներում սեռային ներկայացվածություն 15
Կուսակցության անդամ չհանդիսացող թեկնածուներ 16
Նախընտրական հիմնադրամների մուտք/ելքերի հայտարարագրեր 19
Նվիրատվություններ 20
Նախընտրական շտաբներ 21
Նախընտրական քարոզարշավ 21
Քարոզչական գործիքներ 22
Քարոզչանյութերի տարածման կանոնների խախտումներ 23
Քարոզչանյութերի վնասում 24
Քարոզչանյութերի հեռացում 24
Քարոզչություն ԶԼՄ-ներով 24
Անչափահասների ներգրավում հավաքներին 25
Քարոզչության խոչընդոտում և բռնություն 26
Հավաքներին մասնակցելուն նյութապես շահագրգռելու դեպքեր 27
Կաշառքի, բարեգործության կամ դրանց խոստումների դեպքեր 28
Ատելության և վիրավորական խոսույթ 29
Ընդհանուր միջավայր 29
Վարչական ռեսուրսի չարաշահում 30
Դիտորդության իրականացման խոչընդոտներ 35
Հաղորդումներ՝ ուղղված իրավապահ մարմիններին 36

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների «Ականատես» դիտորդական նախաձեռնությունն իրականացնում է երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդական առաքելություն Երևանի բոլոր վարչական շրջաններում: Դիտարկման աշխատանքները մեկնարկել են 2023թ. օգոստոսի 1-ից՝ Եվրոպական Միության աջակցությամբ:

Տեղեկանքում ամփոփված են նախընտրական քարոզչության զգալի ժամանակահատվածի՝ օգոստոսի 23 - սեպտեմբերի 12-ի դիտարկման տվյալները, որոնք ներառում են ընտրությունների վարչարարության գործընթացը, այդ թվում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) և Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (ԸԸՀ) գործունեությունը, ՏԻՄ մարմինների աշխատանքը, վարչական ռեսուրսի օգտագործումը, նախընտրական շտաբների աշխատանքները և կազմակերպված միջոցառումները: Հիշեցնում ենք, որ նախընտրական ժամանակահատվածում «Ականատես»-ի կողմից արդեն իսկ հրապարակվել է մեկ տեղեկանք՝ Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների նախընտրական միջավայրի վերաբերյալ:

ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական գործընթացները դիտարկվել են ինչպես փորձագիտական հետազոտությունների, այնպես էլ դիտորդների կողմից տեղերում կատարվող ուսումնասիրությունների միջոցով:

Գրասենյակային հետազոտությունների թիրախում եղել են ընտրողների հաշվառումը, սոցիալական մեդիայի գործածությունը, կուսակցությունների ֆինանսավորման հետ կապված հարցերը: Տվյալների հավաքագրումը կատարվել է առցանց բաց տվյալների վերլուծության, պաշտոնական հարցումների, մամուլի լուսաբանումներին և սոցիալական ցանցերին հետևելու միջոցով:

Երկարաժամկետ դիտորդական առաքելության շրջանակներում «Ականատես» նախաձեռնությունը ներգրավել է 10 դիտորդ՝ Երևան քաղաքի 10 ԸԸՀ-ների սպասարկման տարածքներում՝ դիտարկելու և գնահատելու նախընտրական և հետընտրական գործընթացները, այդ թվում՝ ընտրական վարչարարությունը, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) շտաբների գործունեությունը, նախընտրական քարոզչությունը, վարչական ռեսուրսի օգտագործումը, ընտրական գործընթացի այլ մասնակիցների դերակատարումը:

Երկարաժամկետ դիտորդության ընթացքում դիտորդները հավաքագրել են քանակական և որակական տվյալներ ընտրական գործընթացների վերաբերյալ: Տվյալների հավաքագրումը կատարվում է անմիջական դիտարկումների, հանդիպումների, հարցազրույցների, ինչպես նաև մամուլի լուսաբանումներին և սոցիալական ցանցերին հետևելու միջոցով: Դիտորդները տեղերում աշխատել են ԸԸՀ-ների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական շտաբների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ՁԼՄ-

ների, քաղաքացիների, ինչպես նաև՝ ընտրական գործընթացներում տարբեր ծառայություններ մատուցող ընկերությունների հետ:

Տեղեկատվության ճշգրտությունն ու հավաստիությունն ապահովելու նպատակով դիտարկման ընթացքում ստացված ոչ պաշտոնական տվյալները դիտորդների կողմից ստուգվել են մի քանի անկախ աղբյուրների միջոցով: Այնուհետև հավաքագրված տվյալները վերլուծվել են և ամփոփվել նախաձեռնության զեկույցներում, տեղեկագրերում, մամուլի հաղորդագրություններում և վիզուալ նյութերում:

Ընտրական գործընթացի վերաբերյալ արձանագրված խախտումների հիման վրա, մի շարք դեպքերում կազմվել և ներկայացվել են դիմում-բողոքներ ԿԸՀ-ին, հաղորդումներ իրավապահ մարմիններին:

ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ընտրական հանձնաժողովներ

ԿԸՀ համացանցային կայքը տեղեկատվություն է պարունակում ինչպես ԿԸՀ, այնպես էլ՝ ԸԸՀ-ների գործունեության մասին, ներառյալ նիստերի ժամանակացույց, օրակարգ, նիստերի ուղիղ հեռարձակում, տեսաձայնագրություններ և որոշումներ: ԿԸՀ համացանցային կայքում տեղեկատվությունը տեղադրվում է բաց տվյալների և մատչելի ձևաչափով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողով

Ս.թ. հուլիսի 18-ին ԿԸՀ կողմից Երևան քաղաքի ավագանու ընտրությունների վերաբերյալ տեղեկությունը հրապարակելու[1] պահից մինչև սեպտեմբերի 14-ը ԿԸՀ-ն հրավիրել է 9 նիստ, որոնցում հիմնականում քննարկվել են ընտրությունների կազմակերպմանն առնչվող հարցեր, ներառյալ որոշ թեկնածուների ինքնաբացարկի դիմումների քննարկումը: ԿԸՀ-ի կողմից ընտրական գործընթացները կազմակերպվել են հաստատված ժամանակացույցին համապատասխան:

ԿԸՀ նիստերը հեռարձակվել են և տեսագրությունները տեղադրվել են առցանց՝ ԿԸՀ համացանցային կայքով՝ www.elections.am:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ

Երևան քաղաքում գործում է 10 ԸԸՀ[2]: Դրանց սպասարկման տարածքները հիմնականում համընկնում են Երևանի վարչական շրջանների հետ, բացառությամբ՝ երկու դեպքի.թիվ 9 ընտրատարածքում միավորված են Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանները, իսկ թիվ 10-ում՝ Էրեբունի և Նուբարաշեն շրջանները: Հաշվետու ժամանակահատվածում դիտորդների կողմից իրականացվել է 47 այց ԸԸՀ-ներ, դիտարկվել է ընդհանուր 15 նիստ:

[1] https://www.elections.am/Cec/Announcement/Item/480c477e-62fd-464f-8fd6-bef4a98688f0
[2] https://res.elections.am/images/yerevan.gif

ԸԸՀ-ների կազմ

ԸԸՀ-ների կազմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց կազմում սեռային բաշխվածությունը համարյա հավասար է: Միևնույն ժամանակ՝ դրանց նախագահները հիմնականում տղամարդիկ են, իսկ քարտուղարները՝ կանայք:









Հանձնաժողովների կազմերում ներառված չեն անձինք, որոնք օրենքի համաձայն իրավունք չունեն լինել ընտրական հանձնաժողովի անդամ: Սակայն ուշագրավ է, որ մի շարք հանձնաժողովի անդամներ զուգահեռաբար զբաղեցնում են այլ հանրային ծառայության պաշտոններ, ինչը կարող է նրանց մոտ առաջացնել շահերի բախման իրավիճակներ: Մասնավորապես՝ Ավանի վարչական շրջանը սպասարկող թիվ 1 ԸԸՀ անդամներից առնվազն 4-ը, Արաբկիրը սպասարկող թիվ 4 ԸԸՀ անդամներից առնվազն 5-ը, Աջափնյակը սպասարկող թիվ 6 ԸԸՀ անդամներից առնվազն 3-ը, Շենգավիթը սպասարկող թիվ 8 ԸԸՀ անդամներից առնվազն՝ 3-ը հանդիսանում են համապատասխան վարչական շրջանների աշխատակիցներ: Թիվ 6 ԸԸՀ-ի մեկ անդամ հանդիսանում է ԿԸՀ ներքին աուդիտի բաժնի պետը, որն առավել խնդրահարույց է, քանի որ ստացվում է, որ վերադաս հանձնաժողովի աշխատակազմի ներկայացուցիչը պաշտոնավարում է ստորադաս հանձնաժողովում:

Թեև նշված իրավիճակներում չեն խախտվում Ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով և «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները, այդուհանդերձ նմանատիպ համատեղումները վարչական ռեսուրսի չարաշահման որոշակի ռիսկեր են պարունակում ինչպես այդ հանրային ծառայողների՝ իրենց գործատուների/վերադասների կողմից ազդեցության ենթակա լինելու և անկախ դիրքորոշումներ դրսևորելու, այնպես էլ՝ իրենց ծառայության շրջանակում շահառու հանդիսացող քաղաքացիների վրա ազդեցություն գործելու հնարավորությունների առումով: Վարչական շրջաններիև ԸԸՀ-ների սերտաճման հետաքրքիր դրվագ է այն, որ

Ավան վարչական շրջանի հետ կապ հաստատելուց հետո դիտորդի հետ հետադարձ կապվել է ԸԸՀ նախագահը և առաջարկել վարչական շրջանի ներկայացուցիչների փոխարեն հանդիպել և հարցեր տալ իրեն: Վերոնշյալ թիվ 1 ԸԸՀ նախագահը հանդիսանում է նաև Աջափնյակ վարչական շրջանի կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի ղեկավար: Նմանատիպ դեպք գրանցվել է նաև Երեբունի վարչական շրջանում, երբ հերթական այցի ժամանակ ԸԸՀ անդամներից մեկը դիտորդին առաջարկել է վարչական շրջանի աշխատակազմ չայցելել և միանգամից հարցերն ուղղել իրեն, քանի որ ինքը աշխատում է այնտեղ:

«Ականատեսը» հարցում է արել ԿԸՀ՝ ստանալու առավել ամբողջական պատկեր Երևանում տեղակայված ԸԸՀ անդամների աշխատավայրերի և պաշտոնների/զբաղվածության մասին: Պատասխան նամակում ԿԸՀ-ն նշել է, որ ԸԸՀ անդամները, ըստ համապատասխան դիմումների, չեն զբաղեցնում Ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պաշտոնները, սակայն միևնույն ժամանակ նշվել է որ ԿԸՀ-ում առկա չեն պաշտոնապես ներկայացված տեղեկություններ ԸԸՀ անդամների պաշտոնների/զբաղվածության մասին: ԿԸՀ-ն արձանագրել է նաև, որ թեկնածուները ներկայացնում են ինքնակենսագրություն, սակայն «հիմք ընդունելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները և հաշվի առնելով, որ նշված անձնական տվյալների փոխանցումը երրորդ անձանց կամ այլ տվյալներից օգտվելու հնարավորություն տրամադրելն օրենքով նախատեսված չէ, ինչպես նա առկա չէ հայցվող տեղեկատվության տվյալների սուբյեկտների կողմից՝ իրենց վերաբերյալ տվյալները երրորդ անձանց փոխանցելու համաձայնություն, վերոնշյալ անձնական տվյալները տրամադրվել չեն կարող»:

Աշխատանքային պայմաններ և հասանելիություն

Թիվ 2,3,7,8 և 9 ԸԸՀ-ների դեպքում արձանագրվել են տարածքի դժվարամատչելիության խնդիրներ, մասնավորապես վերոնշյալ ԸԸՀ-ների շենքերի դիմաց չկան թեքահարթակներ և մուտքի աստիճանները շատ բարձր են: Աշխատանքային պայմանների մասով խնդիրներ են գրանցվել թիվ 3 և 8 ԸԸՀ-ներում Թիվ 3 ԸԸՀ-ն, որը տեղակայված է Դավիթ Անհաղթի 11 հասցեի 1-ին հարկում՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ նույն շենքում, ապահովված չէ բավարար օդափոխության պայմաններով, իսկ թիվ 1 արհեստագործական ուսումնարանի շենքում տեղակայված թիվ 8 ԸԸՀ-ի աշխատասենյակում չկա պատուհան, տարածքը չի օդափոխվում և զրկված է բնական լուսավորությունից, ինտերնետային կապը նորմալ չի գործում, բարվոք չէ սանհանգույցի սանիտարահիգենիկ վիճակը: Ընդհանուր տեղանքը և աստիճանավանդակն անհարմար են. բազրիքներ և թեքահարթակ չկան, աստիճաններն անհամաչափ են: Սրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ նույն շենքի նիստերի և դասընթացների համար նախատեսված դահլիճը նորոգված է՝ կահավորված անհրաժեշտ գույքով և նոր տեխնիկայով, սակայն օդափոխման համակարգը բացակայում էր:

Նիստեր

Օգոստոսի 7-ից մինչև սեպտեմբերի 14-ը ընկած ժամանակահատվածում թվով 10 ԸԸՆ-ներում գումարվել է 30 նիստ, ընդունվել է 30 որոշում: ԸԸՀ նիստերի օրակարգերը,

տեսաձայնագրությունները և որոշումները տեղադրված են ԿԸՀ կայքում, սակայն ՊԴՖ ֆորմատի փաստաթղթերը չեն բավարարում մատչելիության սկզբունքին և որոնման հնարավորություն չեն ընձեռնում:

Երևան քաղաքի ավագանու 2023թ. սեպտեմբերի 17-ի ընտրությունների առնչությամբ ԸԸՀ-ների կողմից կայացվել են երկու տեսակի որոշումներ՝ Երևանի ավագանու ընտրությունների ընտրական տեղամասերի ցանկը հաստատելու և հերթական համարները սահմանելու մասին որոշում և ՏԸՀ-ների կազմերը հաստատելու և ՏԸՀ նախագահ և քարտուղար նշանակելու մասին որոշում: Բոլոր ԸԸՀ-ների կողմից իրենց սպասարկման տարածքի ՏԸՀ-ների կազմերը հաստատելու մասին որոշումներում կատարվել են փոփոխություններ՝ պայմանավորված ՏԸՀ-ների մի շարք անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հանգամանքի հետ:

ՀՀ ընտրական օրենսգրքի 52-րդ հոդվածի համաձայն՝ ԸԸՀ-ը վերահսկողություն է իրականացնում իր կողմից սպասարկվող տարածքում Ընտրական օրենսգրքի պահանջների կատարման նկատմամբ: Սակայն, ԿԸՀ կայքի վարչական վարույթների բաժնում որևէ ԸԸՀ-ի պարագայում նյութեր չեն արձանագրվել: Որևէ ԸԸՀ-ի կողմից այս լիազորության շրջանակներում սեփական նախաձեռնությամբ վարչական վարույթ չի հարուցվել:

ԸԸՀ-ների աշխատանքներն ընթացել են բնականոն հունով՝ առանց միջադեպերի և խախտումների: ԸԸՀ-ների կին անդամները ակտիվորեն ներգրավված են եղել որոշումների կայացման գործընթացներում: ԸԸՀ-ների համագործակցությունը դիտորդների հետ մեծամասամբ գնահատվել է բաց և կառուցողական, առանց խոչընդոտների:

Դիտորդները բոլոր 10 ԸԸՀ-ների հետ մշտապես գտնվել են կապի մեջ և նաև ներկայացրել բանավոր ահազանգեր արգելված վայրերում փակցված քարոզչանյութերի և այլ ընտրախախտումների վերաբերյալ: Դրական և արդյունավետ համագործակցություն է եղել թիվ 8 և 9 ԸԸՀ-ների հետ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներ

Քվեարկության կազմակերպման նպատակով կազմավորվել է 475 ընտրական տեղամաս, որում ներառված է մոտ 3,800 անդամ: Ս.թ. օգոստոսի 26-ին տեղի են ունեցել ՏԸՀ-ների առաջին նիստերը:

ՏԸՀ-ների կազմ

ՏԸՀ-ների կազմում 65 տոկոսը կազմում են կանայք, սակայն նախագահների միայն 40 տոկոսն է կին, իսկ քարտուղարների՝ 87 տոկոսը:







ՏԸՀ անդամների վերապատրաստում

Ս.թ. սեպտեմբերի 2-ից մեկնարկել են ՏԸՀ-ների անդամների վերապատրաստման դասընթացները: «Ականատեսի» կողմից դիտարկվել է 27 դասընթաց, որոնց մասնակցել է հանձնաժողովի 566 անդամ: ՏԸՀ անդամների ուսուցման որակը դիտորդների կողմից մեծամասամբ գնահատվել է բարձր, իսկ ուսուցման կազմակերպվածությունը՝ միջինից բարձր:

Ընտրողների հաշվառում, ընտրողների ցուցակներ

2023 թ. սեպտեմբերի 17-ի Երևանի ավագանու ընտրություններին ընտրական իրավունք ունեցողների թիվը 823,559 է:



Ընտրողների հաշվառում

ՀՀ Ընտրական օրենսգրքի համաձայն սեպտեմբերի 17-ի Երևանի ավագանու ընտրություններին ընտրական իրավունք ունեցողների թվին են դասվում 18 տարին լրացած, մինչև քվեարկության օրը Երևանում առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող ՀՀ քաղաքացիները: Երևանի ավագանու ընտրություններին մասնակցության իրավունքի առումով նշված 6 ամիսը լրացել է 2023թ. մարտի 18-ին:

«Ականատեսը» հարցում է կատարել ՀՀ Ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն՝ խնդրելով տրամադրել 2022 թ.-ից մինչև 2023 թ.-ի մարտի 18-ը ՀՀ մարզերից և Արցախի Հանրապետությունից (ԱՀ) Երևանի վարչական շրջաններում հաշվառում ստացածների մասին տվյալներ՝ ըստ եռամսյակների:

Ստացված տվյալների[3] վերլուծությունը վեր է հանել մի շարք անոմալիաներ:



Խնդրահարույց տվյալներից մի քանիսի վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը.

2022թ. Դավթաշենում ՀՀ մարզերից և ԱՀ-ից հաշվառվել է 947 քաղաքացի, որից միայն 666-ը՝ Սյունիքի մարզից, ընդ որում՝ դրանցից 640-ը հաշվառվել են 2022թ. երրորդ եռամսյակում՝ հուլիս-սեպտեմբեր ամիսներին: 2022թ. մնացած եռամսյակներում (առաջին, երկրորդ, չորրորդ) Դավթաշենում հաշվառվել են ՀՀ բոլոր մարզերից և ԱՀ-ից համապատասխանաբար 71, 61, 74 հոգի: 2023թ. տարեսկզբից մինչ մարտի 18-ը բոլոր մարզերից և ԱՀ-ից Դավթաշենում հաշվառվել է ընդամենը 47 ՀՀ քաղաքացի:

[3] Տվյալները ներառում են նաև մինչև 18 տարեկան անձանց:



2022թ. Ավանում ՀՀ մարզերից և ԱՀ-ից հաշվառվել է 891 քաղաքացի, որից 698-ը հաշվառվել է Արարատի մարզից, ընդ որում՝ նրանցից 667-ը հաշվառվել է 2022թ. երրորդ եռամսյակում՝ հուլիս-սեպտեմբեր ամիսներին: 2022թ. մնացած եռամսյակներում (առաջին, երկրորդ, չորրորդ) Ավանում հաշվառվել են ՀՀ բոլոր մարզերից և ԱՀ-ից համապատասխանաբար 76, 37, 82 հոգի: 2023թ. տարեսկզբից մինչ մարտի 18-ը բոլոր մարզերից և ԱՀ-ից Ավանում հաշվառվել է 51 ՀՀ քաղաքացի:



2022թ. Նորք-Մարաշ վարչական շրջանում ՀՀ մարզերից և ԱՀ-ից հաշվառվել են 1,699 քաղաքացիներ, որից 1,405-ը հաշվառվել են չորրորդ եռամսյակում, 244-ը՝ երրորդ եռամսյակում: Մնացած երկու եռամսյակում և 2023թ. տարեսկզբից մինչ մարտի 18-ը Նորք-Մարաշում ընդհանուր հաշվառվածների թիվը 50 է: Ուշագրավ է, որ երրորդ եռամսյակում հաշվառված 244-ից քաղաքացիներից 239-ը Կոտայքի մարզից են:





Նշված անոմալիաների վերաբերյալ «Ականատեսի» հրապարակմանն արձագանքելով, ՀՀ Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից ս.թ. սեպտեմբերի 14-ին ստացվել է գրություն առ այն, որ նախապես տրամադրված տեղեկատվության մեջ բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգը սպասարկող կապալառու կազմակերպության կողմից թույլ է տրվել տեխնիկական վրիպակ՝ մարզերի անվանումների հերթական դասավորության պատճառով կատարվել է քանակների սխալ տեղաշարժ, որի արդյունքում ստացվել է մարզերի և քանակների միջև անհամապատասխանություն: Տրամադրվել են ճշգրտված տվյալներ, որոնց վերլուծությունը կներկայացվի «Ականատեսի» հետագա տեղեկանքներում:

Խնդրահարույց հասցեներ

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն ընտրողների նախնական ցուցակը՝ համապատասխան հասցեներով, քվեարկության օրվանից 40 օր առաջ, իսկ վերջնական ցուցակը՝ 7 օր առաջ տեղադրում է համացանցում՝ www.police.am հասցեով:

«Ականատեսն» ուսումնասիրել է սեպտեմբերի 17-ի Երևանի ավագանու ընտրությունների նախաշեմին հրապարակված ընտրողների նախնական ցուցակը, մասնավորապես՝ ամենից շատ հաշվառված ընտրող ունեցող 50 հասցեները: Այդ հասցեներում հաշվառված է ընդհանուր 3,829 ընտրող, այսինքն՝ մեկ հասցեում միջինում մոտ 76 ընտրող: Դրանցում փաստացի հաշվառված ընտրողների թիվը տատանվում է 42-ից մինչև 217 ընտրող:

Ամենաշատ նման հասցեները՝ թվով 10-ը, գտնվում են Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում, ամենից քիչը՝ 2-ական Արաբկիրում և Աջափնյակում: Ամենաշատ ընտրող (թվով 217) ունեցող հասցեն գտնվում է Քանաքեռ-Զեյթունի տարածքում: Ուշագրավ է, որ Քանաքեռ-Զեյթունի դիտարկված 6 հասցեների դեպքում մեկ հասցեում գրանցված է միջինում 97 ընտրող: Այս ցուցանիշով Քանաքեռ-Զեյթունը զիջում է միայն Ավանին, որտեղ 4 հասցեների պարագայում մեկ հասցեում բնակվում է միջինում շուրջ 118 ընտրող:

Տարածք	50-ից ավել ընտրողով հասցեների քանակ	Ընտրողների միջին թիվ
Աջափնյակ	2	47
Արաբկիր	2	53
Դավթաշեն	3	85.93
Նոր Նորք	3	68.25
Ավան	4	118.75
Էրեբունի/Նուբարաշեն	5	65.2
Քանաքեռ-Զեյթուն	6	97.33
Մալաթիա-Սեբաստիա	7	89.75
Շենգավիթ	8	87.9
Կենտրոն/Նորք-Մարաշ	10	78.86
Ընդամենը	**50**	**76**

«Ականատեսի» դիտորդների կողմից 50 հասցեներում իրավիճակի ստուգումը ցույց է տվել, որ որոշ հասցեներում առկա են խնամքի/առողջության կենտրոններ և հանրակացաններ, ինչով պայմանավորված կարող են լինել մանրամասն հասցեավորում իրականացնելու բարդություններ: Առկա են նաև հասցեներ, որտեղ, ըստ բնակիչների, հաշվառումն արվել է օրինակ՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ կենցաղային հարցեր լուծելու համար:

Սակայն որոշ դեպքերում ընտրողների կասկածելի մեծ քանակի մասին տրամաբանական որևէ պատասխան չի ստացվել: Օրինակ՝

- Խանջյան 27 հասցեում, որտեղ գտնվում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան և մասնագիտացված խանութը, գրանցված է 86 ընտրող: Մեկ այլ հասցեով, որը պատկանում է ֆուտբոլային ակումբի, գրանցված է 48 ընտրող:
- Մայյան նրբ. 4-34 հասցեում, որը Նորքի գերեզմանատան հասցեն է, գրանցված է 159 ընտրող:

- Շիրակի Օժ. Տնտ. 447, Օդանավակայան 50 և Թաիրովի փ. 46 հասցեներում, որոնք ամայի և բնակության ոչ ենթակա տարածքներ են, համապատասխանաբար, գրանցված են 71, 66, 171 ընտրողներ:

Հարկ է նշել, որ առանձին հասցեներում մեծաքանակ ընտրողների հաշվառման խնդիրը դիտորդական կազմակերպությունների կողմից բարձրաձայնվել է մի քանի անգամ վերջին ավելի քան 10 տարվա ընթացքում, սակայն ՀՀ ոստիկանության կողմից, փաստորեն, պատշաճ լուծում չի ստացել:

Մասնակից քաղաքական ուժեր

Ընտրական ցուցակներ

Երևանի ավագանու ընտրություններին մասնակցելու հայտ է ներկայացրել և գրանցվել 13 կուսակցություն և մեկ դաշինք՝ ընդհանուր 807 ավագանու անդամի թեկնածուներով (շուրջ 800,000 ընտրողի պարագայում մեկ թեկնածու ամեն 1,000 ընտրողից): Ընտրական օրենսգրքով առավելագույնը 65 անդամ ունեցող ավագանու դեպքում կուսակցության/դաշինքի ընտրական ցուցակում կարող են լինել 195 թեկնածուներ, իսկ նվազագույնը՝ 22: Առավելագույն շեմից 14-ով պակաս թեկնածու է ներկայացրել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ 181 թեկնածու: Հաջորդում են «Ապրելու երկիրը»՝ 129, «Ազգային առաջընթացը»՝ 70 և «Հանրապետությունը»՝ 68 թեկնածուներով: Ամենաքիչ թեկնածուներ ներկայացրել են «Հաղթանակ» և «Հայաստանի եվրոպական կուսակցություն» կուսակցությունները՝ 24-ական՝նվազագույն շեմից 2-ով ավել:



Ընտրական ցուցակներում սեռային ներկայացվածություն

Սեռերի համաչափ բաշխվածությունը, մասնավորապես՝ կանանց ներկայացվածութունը ընտրական ցուցակներում շարունակում է մնալ օրենքի ֆորմալ պահանջները բավարարելու խնդիր: Այսպես, միջինում ցուցակներում տղամարդիկ կազմում են շուրջ 61%, իսկ կանայք՝ 39%, այն դեպքում, երբ ՀՀ բնակչության 52.7 տոկոսը կանայք են[4]: Մրցակից 14 ուժերից ընդամենը երկուսի՝ «Ուժը հայրենյաց» և «Ապրելու երկիր» կուսակցությունների ցուցակն են գլխավորում կանայք: Ընդ որում՝ «Ուժը հայրենյաց» կուսակցությունը միակն է, որի ցուցակում կանայք գերակշռում են: Սեռային բաշխածության համաչափությունը ամենաշատը խախտված է «Ազգային առաջընթաց» կուսակցության ցուցակում, որտեղ տղամարդկանց բաժինը 67.14% է, իսկ կանանցը՝ 32.86%: Համեմատաբար համաչափ բաշխվածություն առկա է 14 ուժերից 4-ի՝ «Ուժը հայրենյաց», «Հանուն սոցիալական արդարության», «Ապրելու երկիր» կուսակցությունների և «Մայր Հայաստան» դաշինքի ընտրական ցուցակներում: Վերոնշյալ ընտրական ցուցակներում կանայք բացի համաչափ ներկայացվածությունից նաև ցուցակների եռյակ համարներում (1-3, 4-6, 7-9 և այլն) բարձր տեղեր են զբաղեցնում, մինչդեռ մնացած կուսակցություններում կանայք ներկայացված են ամեն եռյակի երրորդ համարում, ինչը հուշում է, որ կանանց ներկայացվածությունն ապահովված է ընդամենը օրենքի ձևական պահանջը բավարարելու նպատակով:

[4] ՀՀ վիճակագրական կոմիտե՝ Մշտական բնակչության թվաքանակը https://armstat.am/am/?nid=12&id=19001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC; Մշտական բնակչության թվաքանակը. կանայք https://armstat.am/am/?nid=12&id=19003&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC





Կուսակցության անդամ չհանդիսացող թեկնածուներ

Ընտրական օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն *«Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում կարող են ընդգրկվել նաև այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի անդամ կուսակցություններից ոչ մեկի) անդամ չհանդիսացող անձինք, որոնց թիվը չի կարող գերազանցել այդ ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թվի 30 տոկոսը»:*

Կուսակցության անդամ չհանդիսացող թեկնածուները քաղաքական ուժերի ցուցակներում միջինում կազմում են մոտ 20%:



Կուսակցական թեկնածուներով ամենից շատ համալրված ցուցակը «Հայաստանի եվրոպական կուսակցությանն» է, որին հաջորդում են «Ուժը հայրենյաց» և «Ժողովրդավարական համախմբում» կուսակցությունները: Կուսակցության անդամ չհանդիսացող թեկնածուներով առավել հագեցած է «Ազգային առաջընթաց» կուսակցության ընտրացուցակը:



«Հանրային ձայն» կուսակցության ընտրական ցուցակում տվյալ կուսակցության անդամ չհանդիսացող անձինք կազմում են 23.91%, սակայն ցուցակում ներկայացված է «Այլանս» կուսակցության 3 ներկայացուցիչ, որոնք զբաղեցնում են ցուցակի 2-րդ, 9-րդ, 11-րդ տեղերը: Ավելին, «Այլանս» կուսակցության ղեկավարը հանդիսանում է ցուցակի 2-րդ համարը և պարբերաբար հանդես է գալիս Երևանի ավագանու ընտրություններին երկու կուսակցությունների համատեղ հանդես գալու վերաբերյալ հայտարարություններով[5]: Փաստորեն, տվյալ քաղաքական ուժը ընտրություններին ներկայացել է կուսակցությունների դաշինքի տրամաբանությամբ, չնայած որ այս կուսակցությունների ղեկավար մարմինները չունեն ֆորմալ որոշում դաշինք կազմելու վերաբերյալ: Այսինքն, «Հանրային ձայն» կուսակցությունը և «Այլանս» կուսակցության ներկայացուցիչները հնարավորություն են ստանում մրցակցել ավելի նպաստավոր պայմաններում՝ անցողիկ 6% շեմը հաղթահարելու փոխարեն 4%-ը հաղթահարելու խնդիր ունենալով, դրան զուգահեռ վարելով երկու կուսակցությունների աջակցությանն ուղղված քարոզարշավ:

[5] [1] *«Քննարկում ենք Երևանի ընտրություններին ներկայացվելիք ընտրական ցուցակը: Ի դեպ, տարբեր տեղերից մեսիջներ ուղարկող ու կգուշացնողների համար՝ պարտադիր Այլանսով Հանրային ձայնի հետ, պարտադիր միակ իրական ընդդիմադիր դաշինքով ու ինչքան էլ որ փորձեք "պռավալ" տալ, Կարդան Ղուկասյանը այդ ընտրություններին մասնակցելու է: Այո ընտրությունները մայրաքաղաքում լինելու են թուրքերի ու հայերի միջև և այո՛, մեր միակ հիմնական խոստումը ՔՊ-ն Երևանից դուրս շպրտելն ու ամբողջական իշխանափոխություն անելն է:»*, https://www.facebook.com/UrikhanyanTigran/posts/pfbid034LWhRfsJpouXcJXCSiU5KJJ7ihH5YBMsPyYQXmj6qCpuea6ffndtJqKs8bEEpDv8l. *«..Որոշում է կայացվել մասնակցելու Երևանի ընտրություններին: Որպես Այլանս կուսակցության ղեկավար՝ երկար քննարկումներ եմ ունեցել Հանրային ձայն կուսակցության նախագահ, քաղաքական հետապնդման ենթարկվող Արտակ Գալստյանի հետ: Ունենք մեկ ընդհանուր գաղափար՝ ... ձևավորել լայն դաշինք և վռնդել իշխանություն կոչվածներին ...»* https://mediahub.am/post/989a9e0468cbcab9?fbclid=IwAR1az1zxXOlU2X1v-69atWVHM-IwqPIJpmpt4WRHn0ITx1nvgecLIdZAIs0

«Ազգային առաջընթաց» կուսակցության ցուցակում կուսակցության անդամ չհանդիսացող թեկնածուների թիվն արդեն անցնում է օրենքով թույլատրելի առավելագույն շեմը՝ 30%-ը, ինչը տեղի է ունեցել երկու կուսակցական թեկնածուների ինքնաբացարկի դիմումների ներկայացման արդյունքում: Ներկայումս, Ընտրական օրենսգիրքը որևէ կերպ չի կարգավորում սահմանված շեմը խախտելու հետևանքները, այդ թվում՝ մանդատների բաշխման ժամանակ:

Մասնակից քաղաքական ուժերի ընտրական ցուցակների ձևավորման և հաստատման ընթացակարգերի, դրանց կազմավորման սկզբունքների ու չափանիշների, ինչպես նաև ներկուսակցական ժողովրդավարության մեխանիզմների պարզաբանման նպատակով «Ականատեսը» հարցում է ուղարկել մասնակից բոլոր ուժերին: Բացի «Հայաստանի եվրոպական կուսակցությունից» որևէ քաղաքական ուժից պատասխան չի ստացվել: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով տեղեկատվություն տնօրինող են հանդիսանում բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները, որոնք պարտավորություն ունեն տրամադրելու հարցված տեղեկատվությունը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում: ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում են ստանում ավագանու ընտրություններին մասնակցող «Քաղաքացիական պայմանագիր» և «Հանրապետություն» կուսակցությունները, որոնք փաստորեն չեն կատարել օրենքի այս պահանջը:

Նախընտրական հիմնադրամների մուտք/ելքերի հայտարարագրեր

Ընտրական օրենսգրքի համաձայն նախընտրական քարոզչության նախապատրաստման, կազմակերպման և իրականացման հետ կապված ծախսերն իրականացնելու համար ընտրություններին մասնակցող կուսակցությունները/դաշինքները բացում են նախընտրական հիմնադրամներ: Մասնակից կուսակցությունները/դաշինքները հայտարարագրեր են ներկայացնում ԿԸՀ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն (ՎՎԾ)՝ նախընտրական հիմնադրամներ կատարված նվիրատվություններիև դրանց օգտագործմանվերաբերյալ: Երևանի ավագանու ընտրությունների համար այդ հայտարագրերը ներկայացվում են երեք ժամանակահատվածների համար՝նախընտրական քարոզչության մեկնարկից հետո՝ 10-րդ և 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփումից՝ ոչ ուշ, քան 3 օր առաջ:

Առաջին ժամանակահատվածի համար ներկայացված նախընտրական հիմնադրամների հայտարագրերից պարզվում է, որ ընտրություններին մասնակցող 14 կուսակցությունների և դաշինքի նախընտրական հիմնադրամներ մուտք է եղել մոտ 362 միլիոն դրամ, իսկ փաստացի ծախսերը կազմել են շուրջ 353 միլիոն դրամ:

Զրոյական հայտարարագիր է ներկայացրել միայն «Հայաստանի եվրոպական կուսակցությունը»: Ամենաշատը մուտք և ծախս հայտարարագրել է «Քաղաքացիական պայմանագիրը»՝ 200 մլն մուտք և շուրջ 197 մլն ծախս: Մնացած բոլոր կուսակցությունների/դաշինքի հայտարարագրած մուտքերի և ծախսերի հանրագումարը շուրջ 40 մլն-ով պակաս է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության մուտքերից և ծախսերից:

Ստորև ներկայացված են մրցակցող քաղաքական ուժերի կողմից բացված նախընտրական հիմնադրամների մուտքերն ու ծախսերը ս.թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ:

Կուսակցության անվանում	Նախընտրական հիմնադրամի մուտքեր	Նախընտրական հիմնադրամի ծախսեր
1. Հանրային ձայն	3.846.000	3.929.960
2. Քաղաքացիական պայմանագիր	200.000.000	197.573.719
3. Արդար Հայաստան	4.000.000	3.209.600
4. Հաղթանակ	100.000	80.000
5. Ուժը հայրենյաց	31.000.000	30.680.270
6. Հայաստանի եվրոպական կուսակցություն	0	0
7. Ազգային առաջընթաց	4.824.900	4.189.424
8. Հանուն սոցիալական արդարության	250.000	230.000
9. Հանրապետություն	27.727.300	27.727.300
10. Միացյալ Հայաստան	3.100.000	2.130.400
11. Լուսավոր Հայաստան	7.700.000	7.060.800
12. Ժողովրդավարական համախմբում	9.900.000	9.832.840
13. Ապրելու երկիր	33.600.000	32.831.760
14. Մայր Հայաստան	35.850.000	33.477.160
Ընդամենը	361.898.200	352.953.233

Նվիրատվություններ

ՀՀ ընտրական օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«3. Յուրաքանչյուր ֆիզիկական անձ կարող է կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական հիմնադրամներում կատարել մինչև նվազագույն աշխատավարձի 100-ապատիկի չափով նվիրատվություն»:* ԿԸՀ ՎՎԾ-ն *«հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ընտրության արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ ստուգում, ստուգման արդյունքներով կազմում է եզրակացություն և ներկայացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է այն անհապաղ հրապարակել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում»*:

ԿԸՀ կայքում հրապարակված՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունների/դաշինքի նախընտրական հիմնադրամների միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օգոստոսի 30-ին «Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքի հիմնադրամ Հարությունյան Միքայել անուն ազգանվամբ ֆիզիկական անձի կողմից մուտքագրվել է թվով 6 նվիրատվություն՝ յուրաքանչյուրը 100,000 ՀՀ դրամի չափով: Միևնույն ժամանակ 08.09.2023թ.

եզրակացությամբ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից հայտարարագրերի ուսումնասիրության արդյունքում որևէ խախտում չի արձանագրվել:[6]

Նախընտրական շտաբներ

«Ականատեսը» հարցում է ուղարկել Երևանի ավագանու ընտրություններում մրցակցող կուսակցություններին/դաշինքին՝ պարզելու նրանց գործող և ընտրությունների շրջանակներում ստեղծված ընտրական շտաբների հասցեները, յուրաքանչյուր շտաբի տարածքի նկատմամբ իրավական կարգավիճակը (սեփականություն, վարձակալություն, անհատույց օգտագործում և այլն): Որևէ քաղաքական ուժից պատասխան չի ստացվել: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով տեղեկատվություն տնօրինող են հանդիսանում բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները, որոնք պարտավորություն ունեն տրամադրելու հարցված տեղեկատվությունը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում: ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում են ստանում ավագանու ընտրություններին մասնակցող «Քաղաքացիական պայմանագիր» և «Հանրապետություն» կուսակցությունները, որոնք փաստորեն չեն կատարել օրենքի այս պահանջը:

Դիտարկման ժամակահատվածում դիտորդները այցելել են կուսակցությունների/դաշինքների 66 շտաբներ: Բացի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Շենգավիթում և Մալաթիայում գտնվող մի քանի շտաբերից, մնացած բոլոր դեպքերում հնարավոր է եղել կազմակերպել հարցազրույցներ շտաբի համակարգողների հետ: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 10 շտաբներից (անգամ մի քանի այցելություններից հետո) հնարավոր չի եղել ստանալ ամբողջական և համապարփակ տեղեկատվություն նախընտրական գործընթացների վերաբերյալ:

Նախընտրական քարոզարշավ

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու սահմանված կանոնները[7]: Նախընտրական քարոզչության ժամանակահատվածի համար են գործում նաև վարչական ռեսուրսի օգտագործման սահմանափակումները:[8]

Երևան քաղաքի ավագանու 2023թ. սեպտեմբերի 17-ի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվել է 2023թ. օգոստոսի 23-ին և ավարտվելու է սեպտեմբերի 15-ին, ժամը 24:00-ին:

[6] https://res.elections.am/images/forWebPages/Verahskich/Conclusion17.09.2023h1_08-09-2023.pdf
[7] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 19
[8] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 19, հոդված 23

Քարոզչական գործիքներ

Քարոզարշավի ընթացքում մրցակից ուժերն օգտագործել են բազմազան ձևաչափեր, ինչպես նաև ասոցացվող քարոզչանյութեր, «բարեգործական» միջոցառումներ և այլն: Առավել ակտիվ ու նկատելի է եղել «Քաղաքացիական պայմանագիր» և «Ապրելու երկիր» կուսակցությունների, առավել պասիվ ու աննկատ՝ «Հայաստանի եվրոպական կուսակցության» քարոզարշավը:

Կուսակցություն/ Դաշինք	**Կիրառվող քարոզչական գործիքներ**								
	Հանրահավաք	Քայլերթ	Բակ. հանդիպումներ	Ավտոերթեր	Հանրային քննարկում	Գովազդային վահանակ	Պաստառ/ Թռուցիկ/բուկլետ	Համացանց. ն գովազդ	Ասոցացվող քարոզչանյութեր
1. Հանրային ձայն			✓			✓	✓	✓	
2.Քաղաքացիական պայմանագիր	✓	✓	✓			✓	✓	✓	✓
3. Արդար Հայաստան			✓			✓	✓	✓	
4.Հաղթանակ			✓			✓	✓	✓	
5. Ուժը հայրենյաց			✓	✓		✓	✓	✓	✓
6.Հայաստանի եվրոպ. Կուս.						✓			
7. Ազգային առաջընթաց			✓			✓	✓	✓	
8. Հա.նուն սոցիալական արդարության			✓	✓		✓	✓		
9.Հանրապետություն	✓		✓			✓	✓	✓	
10. Միացյալ Հայաստան			✓			✓	✓	✓	
11. Լուսավոր Հայաստան			✓			✓	✓	✓	
12.Ժողովրդավարական համախմբում			✓			✓	✓	✓	
13. Ապրելու երկիր		✓	✓		✓	✓	✓	✓	✓
14. Մայր Հայաստան	✓	✓	✓			✓	✓	✓	

Նախընտրական քարոզչության շրջանում «Ականատես» դիտորդական առաքելության դիտորդները մասնակցել են շուրջ 90 նախընտրական միջոցառումների, ունեցել են 25 հանդիպում՝ վարչական շրջանների ներկայացուցիչների, 22 հանդիպում՝ ոստիկանություն, ՁԼՄ և տեղական դիտորդների հետ:

Քարոզչանյութերի տարածման կանոնների խախտումներ

Երևան քաղաքի տարբեր հատվածներում նկատվել է առանձին կուսակցությունների և թեկնածուների քարոզչանյութերի գերկենտրոնացում, երբեմն՝ ասոցացվող նյութերի համադրմամբ: Այդպիսի քարոզչանյութերի ամենամեծ ծավալն արձանագրվել է «Քաղաքացիական պայմանագիր», «Ապրելու երկիր» և «Ուժը հայրենյաց» կուսակցությունների դեպքում, հիմնականում Կենտրոն և Արաբկիր վարչական շրջանների տարածքում: Նույն կուսակցությունների պարագայում բազմաթիվ են եղել նաև քարոզչանյութերի արգելված վայրերում տարածման դեպքերը: Այսպես, «Քաղաքացիական պայմանագրի» կուսակցության պարագայում արձանագրվել է 42, «Ապրելու երկիր» կուսակցության դեպքում՝ 38, իսկ «Ուժը հայրենյաց»-ի դեպքում՝ 29 նման դեպք: Արգելված վայրերում քարոզչանյութերի փակցման 2-3 դեպք արձանագրվել է «Հանրապետություն», «Ժողովրդավարական համախմբում», «Արդար Հայաստան» և «Ազգային առաջընթաց», «Միացյալ Հայաստան» կուսակցությունների դեպքում: Հիմնականում այդպիսի պրակտիկա կիրառվել է քարոզչանյութեր փակցնելով բազմաբնակարան շենքերի, մթերային խանութների, կրպակների և առևտրային օբյեկտների, սյուների, շքամուտքերի ներքին և արտաքին հատվածների վրա:

Հիմնական ասոցացվող նյութերը ևս եղել են վերը նշված երեք կուսակցությունների կողմից: Դրանց թվում են՝

- «Ասացի՞ք» քարոզչանյութերը, որոնք նաև կրում են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անվանումն ու տարբերանշանը.
- «Տիկին նախարարը» հեռուստասերիալի և «նախկին, ներկա և սեպտեմբերի 17-ից հետո» պաստառները, որոնք ասոցացվում են «Ապրելու երկիր» կուսակցության նախագահ Մանե Թանդիլյանի հետ.
- «Ուժը հայրենյաց» կուսակցության 2-րդ համար՝ Նատալյա Արզաքանցյանի գովազդային պաստառները:

Դիտարկված ասոցացվող նյութերում առկա չեն եղել տպաքանակի և տպագրատան մասին որևէ նշումներ:

Նկատվել են քարոզչանյութերի համար սահմանված կանոնների բազմաթիվ խախտումներ: Մասնավորապես, դիտարկված քարոզչանյութերի շրջանակում՝ 22 դեպքում «Ուժը հայրենյաց» կուսակցության նախընտրական քարոզչանյութերի վրա նշված է եղել կուսակցության անվանումը, կարգախոսը, քվեաթերթիկում հերթական համարը, սակայն բացակայել են տպաքանակի և տպարանի վերաբերյալ տվյալները: «Հանուն սոցիալական արդարության»

կուսակցության բուկլետների վրա ևս համապատասխան նշում չի եղել տպարանի և տպաքանակի վերաբերյալ: «Միացյալ Հայաստան» և «Ուժը հայրենյաց» կուսակցությունների բուկլետների վրա նշված է եղել տպաքանակը, սակայն բացակայել է տպարանի վերաբերյալ նշումը: Նկատվել է հինգ դեպք, որտեղ «Մայր Հայաստան» դաշինքի պաստառներում բացակայել են տպարանի և տպաքանակի վերաբերյալ տվյալները: Սահմանված կանոնների ամենաշատ խախտումներ՝ 26 դեպք բացահայտվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դեպքում, որտեղ բացակայել են տպաքանակի և տպարանի վերաբերյալ տվյալները: Համանման խախտումներ 4 անգամ նկատվել են նաև «Ապրելու երկիր» կուսակցության կողմից:

Քարոզչանյութերի համար համայնքի կողմից հատկացված անվճար տեղերում ճնշող մեծամասնություն են կազմում «Ապրելու երկիր» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների քարոզչանյութերը: Դրանք հաճախ փակցված են այնպես, որ ծածկում են ամբողջ հատվածը ու որևէ այլ նյութ փակցնել հնարավոր չէ:

Քարոզչանյութերի վնասում

Համայնքի կողմից հատկացված անվճար տեղերում, ինչպես և չսահմանված վայրերում հանդիպել են պատռված քարոզչանյութեր: Այդպիսի 20 դեպք նկատվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դեպքում, 7-ական դեպք՝ «Ապրելու երկիր» և «Ուժը հայրենյաց» կուսակցությունների, և 2-ական դեպք՝ «Լուսավոր Հայաստան», «Միացյալ Հայաստան», «Ազգային առաջընթաց» կուսակցությունների դեպքում:

Քարոզչանյութերի հեռացում

Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ օրենքի խախտմամբ փակցված քարոզչանյութերի հեռացման պատասխանատուն համայնքի ղեկավարն է, ով անհրաժեշտության դեպքում՝ ոստիկանության աջակցությամբ պարտավոր է հեռացնել օրենքի խախտմամբ փակցված քարոզչանյութերը:

«Ականատես»-ի դիտորդները մի քանի տասնյակ դեպքերով ահազանգել են ԸԸՀ-ներին, որպեսզի իրենց միջնորդությամբ հեռացվեն արգելված վայրերում փակցված քարոզչանյութերը, սակայն սակավաթիվ դեպքերում է, որ ողջամիտ ժամկետում քարոզչանյութերը հեռացվել են:

Հազվադեպ դեպքերում է արձագանքը եղել արագ և արդյունավետ: Ընդհանուր առմամբ, վարչական շրջանների աշխատակազմերը հիմնականում անհետևողական են եղել, իսկ ԸԸՀ-ների արձագանքը, բացառությամբ երկուսի, գնահատվում է ոչ բավարար:

Քարոզչություն ՁԼՄ-ներով

ՀՀ ընտրական օրենսգրքի 20.1-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում համացանցում, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով, նախընտրական քարոզչությանը վերաբերող՝ վճարովի

հիմունքներով գովազդային նյութեր և տեսանյութեր կարող են տեղադրվել միայն թեկնածուի, կուսակցության կամ նրա ներկայացուցչի հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա՝ նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին: Նախընտրական քարոզչական նյութերի հրապարակումը պետք է ուղեկցվի «Նախընտրական քարոզչություն» լուսագրով, իսկ քարոզչական տեսանյութերի դեպքում՝ տեսանյութի վրա տեղադրվող «Նախընտրական քարոզչություն»՝ անընդմեջ ուղեկցվող լուսագրով: Նախընտրական քարոզչական նյութերի և տեսանյութերի հրապարակումը պետք է տեղեկություններ պարունակի պատվիրատուի վերաբերյալ: ՀՀ ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնադրած զանգվածային լրատվության միջոցները նախընտրական քարոզչության ժամանակահատվածում պարտավոր են թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար ապահովել ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ:

«Ականատես»-ի կողմից արձանագրվել են նախընտրական քարոզչական նյութերի՝ առանց «Նախընտրական քարոզչություն» լուսագրի ուղեկցման և այլ անհրաժեշտ տվյալների հրապարակման բազմաթիվ դեպքեր համացանցային լրատվամիջոցներում: Այդպիսի դեպքերը հավաստող ապացույցները՝ համապատասխան կայքերի արտատպվածքները տեղադրված են հետևյալ հղմամբ: Այս մասին նաև տեղեկացվել է ԿԸՀ-ն՝ արձանագրված խախտումները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու ակնկալիքով: Սույն տեղեկանքի հրապարակման պահին մասնակի շտկում է կատարվել միայն «Առավոտ» լրատվականում:

«Արմենպրես» պետական (100 տոկոս բաժնետոմսերը պատկանում են ՀՀ-ին) լրատվական գործակալություն ՓԲԸ-ի կողմից հիմնադրված լրատվամիջոցում տեղադրված են եղել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության բազմաթիվ քարոզչանյութեր, որոնք չեն պարունակել Ընտրական օրենսգրքով սահմանված տեղեկությունները: Այս կապակցությամբ դիտորդական առաքելության կողմից ԿԸՀ-ին դիմում է ներկայացվել՝ տվյալ լրատվամիջոցի կողմից ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների համար ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմանների ապահովման պահանջի պահպանման հարցադրմամբ և քարոզչանյութերի՝ սահմանված վավերապայմանների կապակցությամբ, դիմումը ներկայացնելուց հետո տվյալ խնդիրը լուծվել է, քաղաքական գովազդը հեռացվել է:

Անչափահասների ներգրավում հավաքներին

Առանձին քաղաքական ուժերի նախընտրական քարոզչության ընթացում ակտիվորեն ներգրավված են եղել անչափահասներ, որոնց ծնողները մոտակայքում չեն նկատվել, իսկ նրանք երբեմն կրել են կուսակցությունների/դաշինքի տարբերանշաններով վերնաշապիկներ, իրենց ձեռքերում պահել դրոշակներ և բաժանել թռուցիկներ:

- «Ապրելու Երկիր» կուսակցության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բակային հանդիպումներին, Աջափնյակի «Բուենոս Այրեսի» այգում, Դավթաշենում և Կենտրոն համայնքում տեղի ունեցած երթի ժամանակ ներգրավվել է առնվազն 17 անչափահաս.

- «Մայր Հայաստան» դաշինքի 25.08.2023թ.-ին կազմակերպած երթին և Նոր Նորքում իրականացրած քարոզչական հանդիպումներին արձանագրվել է 11 անչափահասների մասնակցություն,
- «Արդար Հայաստան» կուսակցության հանդիպումներից մեկին ներգրավվել է առնվազն 4 անչափահաս:
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից Արաբկիրի թաղապետի նախաձեռնությամբ իրականացվող բակային հանդիպումներին և երթերի ու հանդիպումների ժամանակ կուսակցության դրոշները պահելու միջոցով, մասնակցել է առնվազն 10 անչափահաս: Նմանատիպ դեպքեր նկարագրված են Վարչական ռեսուրսի չարաշահում բաժնում:

Երեխաները ընտրելու իրավունք չունեն, ուստիև նրանց ներգրավումը քարոզարշավներին որևէ կերպ հիմնավորված չէ: Երեխաների քաղաքական մասնակցությունը պետք է հիմնված լինի բացառապես կամավորության սկզբունքի հիման վրա: Սակայն մի շարք դեպքերում այդ սկզբունքը ակնհայտորեն խախտված է և քաղաքական ուժերը անչափահասներին փաստացորեն ներգրավում են քարոզարշավում զուտ ֆասադային մասնակցության նպատակով:

Քարոզչության խոչընդոտում և բռնություն

Սեպտեմբերի 3-ին, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության շտաբից դիտորդին հայտնած տեղեկության համաձայն, կուսակցության՝ Արարատյան մասիվի շտաբերից մեկի դիմաց հավաքվել են «Ազգային ժողովրդավարական բևեռ»-ի համակիրները, ջուր լցրել շտաբի վրա, անվայել խոսքեր ասել, իսկ շտաբի մյուս ներկայացուցիչները «Ազգային ժողովրդավարական բևեռ»-ի համակիրներին հեռացրել են տվյալ վայրից:

Սեպտեմբերի 8-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության բակային այցերի ընթացքում տեղի է ունեցել բռնության գործադրում և ընդհարում բնակիչներից մեկի և կուսակցության համակիրների միջև: Բակային երթի ժամանակ մի քաղաքացի շքամուտքից դուրս գալով բղավել է «Նիկոլ դավաճան», որից հետո «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության երթի մասնակից համակիրներից երկուսը մոտեցել են ու սկսել հարվածել քաղաքացուն: Այնուհետ, տեսնելով որ դիտորդը և ոստիկանության աշխատակիցը մոտենում են, մի քանի համակիր նրանց հեռացրել են դեպքի վայրից, իսկ երթի մյուս մասնակիցներին հորդորել են արագ առաջ շարժվել: Մտահոգիչ է, որ ոստիկանությունը բռնություն գործադրողներին պատասխանատվության ենթարկելու փորձ չի կատարել:

Գրանցվել է քարոզչության խոչընդոտման մեկ այլ դեպք, երբ «Մայր Հայաստան» դաշինքի ներկայացուցիչներին Շինարարների փողոցի բնակիչները թույլ չեն տվել ներկայացնել նախընտրական ծրագիրը, կամ զրուցել իրենց հետ: Բնակիչները անվանարկել են դաշինքի ներկայացուցիչներին, պահանջել հեռանալ տարածքից:

Նախընտրական քարոզչության շրջանի ակտիվացմանը զուգահեռ սոցիալական ցանցերում ակտիվացել են նաև տարատեսակ, ակնհայտ կեղծ օգտատերերն ու էջերը, որոնք

կազմակերպված ձևով և նպատակաուղղված հակաքարոզչություն են իրականացրել մրցակից կուսակցությունների հանդեպ: Մեր դիտորդների հետ հանդիպումների և հարցազրույցների ժամանակ այս մասին իրենց մտահոգություններն են հայտնել տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ, մասնավորապես նշվել է, որ պարբերաբար տեղի են ունենում կեղծ օգտահաշիվների գրոհներ և կեղծ էջերով տարածվում է վարկաբեկող տեղեկատվություն իրենց մասին: Այս խնդրին իրենց հետազոտություններում անդրադարձել են նաև հետաքննող լրագրողները[9][10], որոնց արդյունքները, մասնավորապես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից իրականացվող գործողությունների մասով, խիստ մտահոգությունների տեղիք են տալիս:

Հավաքներին մասնակցելուն նյութապես շահագրգռելու դեպքեր

ՀՀ Քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով պատասխանատվություն է նախատեսվում այդ թվում օրինական կամ անօրինական հավաքին մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելու համար:

«Ականատեսը» անանուն ահազանգ էր ստացել այն մասին, որ Instagram-յան խմբերից մեկում նախընտրական երթերին դրամական հատուցման դիմաց մասնակցելու հայտարարություններ են տարածվում: «Ականատես»-ի հետաքննությունը պարզել է, որ, մասնավորապես, «Promo host»[11] գովազդային տեխնոլոգիաների կազմակերպությունն իր ինստագրամյան աշխատանքային չատում հավաքագրում է երիտասարդ կանանց՝ մեկ ժամը 1,000 դրամ գումարի դիմաց քարոզչական երթերին մասնակցելու՝ «ուղղակի քայլելու» համար: «Promo host»-ի ներկայացուցչի հետ WhatsApp սոցիալական հարթակում տեղի ունեցած գրագրության համաձայն՝ մասնակից աղջիկներին հանձնարարվել է կրել սպիտակ շապիկներ և ջինսե տաբատներ, ինչպիսի տեսքով որ քարոզարշավին մասնակցում են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչները[12]: Ընդ որում, մասնակցել ցանկացողներից պահանջվում է նաև նախապես ուղարկել իրենց լուսանկարը կազմակերպչին՝ հաստատում ստանալու նպատակով: Մասնակիցները հրավիրվում են Սայաթ-Նովա 40 հասցեում գտնվող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գլխամասային գրասենյակ, որտեղից մեկնարկում են քարոզչական երթերը: Մեկ դեպքում գրագրության մեջ նշվում է, որ բացի քայլերթին մասնակցելուց հավաքագրվող անձանցից պահանջվելու է նաև տարածել թռուցիկներ: Նշված տեղեկատվության իսկությունը հաստատելու և առավել մանրամասն տեղեկություններ ստանալու նպատակով դիտորդական առաքելության ներկայացուցիչը հեռախոսային կապ է հաստատել «Promo host» կազմակերպության կոնտակտային համարով և զրուցել դրա ներկայացուցչի հետ, ով նշել է, որ հավաքագրվող աղջիկների աշխատանքը ենթադրում է «միայն քայլել», այսինքն՝ ընդամենը մասնակցել երթին:

[9] «Սիվիլնեթ»-ի հետաքննությունը կեղծ էջերի քարոզչական գրոհների մասին - https://fip.am/23364, 04/09/2023
[10] «Փաստերի ստուգման հարթակ»-ի հետաքննությունը կեղծ օգտահաշիվների ու էջերի վերաբերյալ - https://www.civilnet.am/news/749216/, 06/09/2023
[11] Promo host-ի ֆեյսբուքյան էջը՝ https://www.facebook.com/profile.php?id=100063467502649
[12] Քաղաքացիական Պայմանագիր կուսակցության հանդիպումը Աջափնյակում - https://www.facebook.com/watch/live/?ref=watch_permalink&v=978209453616284

Նմանօրինակ հայտարարություն է տեղադրվել նաև «Սիթի Փրոմոուշն» ֆեյսբուքյան օգտահաշվում, որտեղ նշվում է, որ անհրաժեշտ են «մեծ խմբաքանակի աղջիկներ և տղաներ բացօթյա միջոցառման ժամանակ ձեռքի դրոշակներ պահելու համար»:

Նկարագրված փաստական տվյալները առերևույթ պարունակում են հավաքին (տվյալ դեպքում՝ քայլերթին) մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելու հանցակազմի հատկանիշներ, ինչի կապակցությամբ հաղորդում է ներկայացվել ՀՀ դատախազություն:

Պետք է նշել, որ բացի սոցիալական ցանցերի միջոցով բացահայտումից դիտորդներն անձամբ են գրանցել նման մեկ դեպք օգոստոսի 30-ին, երբ Աջափնյակ համայնքի Բուենոս Այրեսի այգում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հանրահավաքին մասնակցել են անչափահաս տղաներ և աղջիկներ, որոնցից մեկը դիտորդին տեղեկացրել է, որ 4,000 ՀՀ դրամ է վճարվում քարոզչական դրոշ պահելու համար:

Կաշառքի, բարեգործության կամ դրանց խոստումների դեպքեր

Նախընտրական քարոզչության ընթացքում «Ապրելու երկիր» կուսակցությունը քարոզչական նյութերին զուգահեռ որոշ ընտրողների տրամադրել է նվեր-քարտեր: Դրանց մի կողմում նշված է կուսակցության անունն ու լոգոն, մյուսում առկա է գրառում՝ «Պահիր այս քարտը, անակնկալները՝ սեպտեմբերի 17-ից»: Այդպիսի քարտ ստացած տարեց քաղաքացիներից մեկն առաքելության դիտորդին հայտնել է, թե իրեն նվիրել են բանկային քարտ, այսինքն՝ նվեր-քարտը շփոթել է բանկային քարտի հետ:

Նշված քարտերի կարգավիճակը և դրանց ստանալու ու պահպանելու հետևանքները պարզելու նպատակով դիտորդական առաքելության ներկայացուցիչը կապ է հաստատել «Ապրելու երկիր» կուսակցության գրասենյակի ներկայացուցչի հետ, որը հաստատել է, որ քարտի պահպանման դեպքում անձանց սպասվում են նվերներ՝ միաժամանակ նշելով, որ մանրամասները հայտնի կլինեն ընտրություններից հետո:

ՀՀ քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում այդ թվում ընտրությունների նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը կուսակցության կողմից կամ նրա անունից կամ որևէ այլ եղանակով կամ բարեգործության անվան տակ ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթուղթ, ապրանք կամ ծառայություններ տալու/մատուցելու կամ դրանք խոստանալու համար:

«Ապրելու երկիր» կուսակցության կողմից ընտրողներին նվեր քարտ բաժանելը հետագայում որևէ բարիք (ապրանք, ծառայություն) ստանալու առերևույթ ակնկալիք է առաջացրել ընտրողների մոտ: Նկարագրված փաստական տվյալները առերևույթ պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածով սահմանված՝ վերը նշված հանցակազմի հատկանիշներ:

Ատելության և վիրավորական խոսույթ

Ատելության խոսույթը ուղղորդված խոսքի ձև է, որը մերժում է արժանապատվության և հավասարության՝ մարդու հիմնարար իրավունքները և փորձում նսեմացնել անհատների և խմբերի դիրքը հասարակության մեջ: Ատելության խոսքը նաև պարունակում է ռիսկեր՝ հրահրելու ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն, այդ թվում՝ պայմանավորված նրանց քաղաքական հայացքներով:

Նախընտրական քարոզչության ընթացքում արձանագրվել է ատելության խոսքի տարրեր պարունակող երկու դրևորում: Առաջին դեպքում՝ 29/08/2023թ.-ին Աջափնյակում կայացած հանդիպման ժամանակ, «Ուժը Հայրենյաց» կուսակցության ներկայացուցիչ Մերի Մարկոսյանը դիտորդի հետ անձնական զրույցում նշել է, որ «քաղաքը պետք է մաքրել հնդիկներից և պարսիկներից», այրելու կոչեր արել նաև ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների հասցեին:

Ատելության խոսքի և թշնամանքի տարրեր են պարունակում «Հանրային ձայն» կուսակցության ներկայացուցիչ Վարդան Ղուկասյանի ուղիղ եթերների ընթացքում հնչող խոսույթը և մյուս թեկնածուների հանդեպ հայհոյախառն արտահայտությունները:

Ատելության խոսքից զատ, նախընտրական քարոզչության ընթացքում գերակշռող է եղել վիրավորանքը, անձերի թիրախավորումը և թշնամանքի տարածումը, մասնավորապես ամենաշատը աչքի է ընկել «Մայր Հայաստան» դաշինքը, որը կառավարությանը և քաղաքային իշխանությանն անվանել է «երիտթուրքեր», «հարավկովկասյան թաթարներ», Դաշինքի գրեթե բոլոր ելույթները ուղեկցվեն էին՝ «Նիկոլ դավաճան», «պետության գլխին նստած աղբակույտ» արտահայտություններով: Բնակիչների հետ զրույցում կուսակցության ղեկավարը նշել է, որ «այդ դավաճանին հրապարակային գնդակահարելու ենք, մահապատժի ենք ենթարկելու»: Այս կոչերին ներգրավվել են նաև անչափահաս երեխաներ՝ առանց ծնողների ներկայության:

Ընդհանուր միջավայր

Ականատեսի դիտորդները հանդիպել են վարչական շրջանների բնակիչների հետ: Տեղի է ունեցել մոտ 250 հանդիպում, որոնց մասնակցել են մոտ 450 անձ: Ըստ ստացված տվյալների բնակիչները հիմնականում բողոքել են բակերի անբարեկարգ վիճակից, կանաչապատ տարածքների բացակայությունից, աղբահանությունից: Դժգոհել են, որ ամեն անգամ եղել են խոստումներ, սակայն ընտրություններից հետո ոչ մի նորմալ ծրագիր չի իրականացվել ու նրանք հույս էլ չունեն, որ այս ընտրություններից հետո էական որևէ բան կփոխվի:

Ըստ բնակիչների, քարոզարշավը հիմնականում հանգիստ և հանդարտ է ընթանում, սակայն կան որոշակի հանգամանքներ, որոնք լարվածություն են մտցնում նախընտրական պայքարում, մասնավորապես սահմանային իրավիճակի բացասական փոփոխությունները, կեղծ օգտատերերի և էջերի միջոցով իրականացվող հակաքարոզչությունը և վիրավորանքը, միմյանց պիտակավորումը: Բնակիչների պնդմամբ՝ «Մայր Հայաստան» դաշինքը ամենաշատն է իր հռետորաբանության մեջ կիրառել թշնամանք և վիրավորանք: Նրանցից շատերը նաև անհանգստացած էին ընտրապայքարի ընթացքում կիրառվող վարչական ռեսուրսի մեծ

ծավալներով և կարծում էին՝ այս ժամանակահատվածի աննախադեպ քանակով աճ գրանցած բարեկարգումներն ու շինարարական աշխատանքները դրանց վառ վկայությունն են:

Վարչական ռեսուրսի չարաշահում

Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում լայնորեն կիրառվել են վարչական մեխանիզմներն ու լծակները, ինչի արդյունքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համար ձևավորվել է մրցակցային առավելություն մյուս կուսակցությունների հանդեպ:

Առավել ակնհայտ և համակարգային դրվագը Երևանի բոլոր թաղապետարանների մշտական ներգրավումն է քարոզչական գործընթացներում, որոնցից որոշ օրինակներ նկարագրված են ստորև:

- Ս.թ. օգոստոսի 24-ին Մալաթիա-Սեբաստիայում տեղի ունեցած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչությանը մասնակցել են քաղաքապետի խորհրդական Սաշա Կատվայանը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թաղապետի տեղակալ Լազր Խաչատրյանը, ովքեր ճշտված ինֆորմացիայի համաձայն չեն գտնվել արձակուրդում:
- Դիտորդի կողմից աշխատանքային ժամին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության շտաբ այցելության ժամանակ պարզվել է, որ այնտեղ է գտնվում վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Լազր Խաչատրյանը, ում մասին թաղապետարանից հայտնել էին, որ նա գնացել է աշխատանքային շրջայցի: Վարչական շրջանի նախկին ղեկավար, այժմ քաղաքապետի խորհրդական Սաշա Կատվայանը նույնպես աշխատանքի ժամին շտաբում է գտնվել:
- Արաբկիր և Աջափնյակ վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցներին դիտորդները նկատել են աշխատանքային ժամերին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության բուկլետներ բաժանելիս և քարոզչական այլ աշխատանքներին մասնակցելիս:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Երևանի վարչական շրջանների ղեկավարները, երբեմն նաև նրանց փոխարինողները համատարած գնացել են արձակուրդ և նրանց հետ հնարավոր չի եղել կազմակերպել հանդիպում-հարցազրույցներ դիտորդների հետ: Միևնույն ժամանակ, չնայած արձակուրդում գտնվելու հանգամանքին, վարչական շրջանների ղեկավարները, ովքեր նաև «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակում ներառված թեկնածուներ են, մասնակցել են համապատասխան վարչական շրջանների առօրյա աշխատանքներին ու հանդիսավոր միջոցառումներին, հսկել բոլոր ակտիվորեն ընթացող գործընթացները: «Ականատես»-ի՝ Երևանի քաղաքապետարանին ուղղված հարցմանը՝ Երևան քաղաքի ավագանու ընտրություններին մասնակից կուսակցությունների ընտրական ցուցակներում ներառված Երևանի քաղաքապետարանի կամ Երևանի վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցների ցանկի և նրանց արձակուրդում գտնվելու ժամկետի վերաբերյալ պատասխան չի ստացվել:

Վարչական շրջանի ղեկավարի և անձնակազմի կողմից գրեթե ամենօրյա ռեժիմով իրականացվել են բակային շրջայցեր և հանդիպումներ, որոնց ընթացքում նրանք համատեղելով ավագանու թեկնածուի և վարչական շրջանի ղեկավարի պաշտոնը փորձել են արձանագրել և լուծել բնակիչների առաջ քաշած խնդիրները, ինչպես նաև ճշտումներ կատարել, թե բնակիչները ո՞ւմ են հակված ընտրելու: Հանդիպումների ժամանակ անընդհատ շեշտել են իրենց պաշտոնն ու ասել, որ «թաղապետարանը ժողովրդի կողքին է» և այդտեղ է՝ լսելու իրենց բոլոր խնդիրները:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում մեկնարկել են աննախադեպ քանակի բարեկարգման և շինարարական աշխատանքներ բոլոր վարչական շրջաններում: Դրանք հաճախ լուծել են այնպիսի խնդիրներ, որոնք տարիներով եղել են մոռացված: Միևնույն ժամանակ բարեկարգումների ընթացքին և աշխատանքների ավարտին զուգընթաց իրականացվել է ակտիվ քարոզչություն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և դրա ցուցակում ներառված թաղապետ հանդիսացող թեկնածուների հիշատակմամբ:

- Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բնակիչները տարիներով բողոքում էին ջրամատակարարման խողովակների վիճակից և քաղաքապետարանի կողմից արձագանք չէր տրվում այս խնդրին: Միայն ս.թ. Օգոստոսի 21-ին Երևանի քաղաքապետարանում գործակարգավարական խորհրդակցության ժամանակ փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանի կողմից կայացվեց որոշում խողովակների փոփոխման վերաբերյալ: Քանաքեռ-Զեյթունի վարչական շրջանի ղեկավար Արտակ Հովակիմյանը ակտիվ այցելություններ է կատարել այն բակեր, որտեղ վերջերս իրականացվել է կառուցապատում, օրինակ՝ Դրոյի 6 հասցեում բակի վերանորոգված հատվածը կամ Մինաս Ավետիսյանի անվան այգին, որը կառուցման փուլում է, կամ նոր մարզադաշտը (Դրոյի 24 շենքի բակում): Բացմանը ներկա էին համայնքապետարանի աշխատակիցներ, վարչության պետեր, աշխատակազմի քարտուղար Ագիթ Կայմազովը, կրթության, մշակույթի և սպորտի բաժին ղեկավար ժամանակավոր պաշտոնակատար Սամվել Ադամյանը, կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի ղեկավար Գոռ Պողոսյանը, վարչական շրջանի ղեկավարի տեղակալն է, և ղեկավարինփոխարինող Արմեն Ղալաչյանը: Ներկա էին նաև քաղաքապետարանի շինարարության վարչության աշխատակիցները: Հավաքը սկսվել է 16:45-ից, և նշված մարդիկ, փաստորեն, աշխատանքային ժամին ներկա են գտնվել իր բնույթով քարոզչական միջոցառմանը:
- Նոր Նորքի վարչական շրջանի ֆեյսբուքյան էջով նշվել է, որ թաղապետ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Նոր Նորքի գրասենյակի ղեկավար և այդ կուսակցության ընտրական ցուցակի 37-րդ համարը հանդիսացող Արմեն Միերյանի ջանքերով լուսավորվել է[13] Նանսենի այգին: Այնինչ, տարածքի բնակիչների վկայություններով, այգին միշտ լուսավորված է եղել, պարզապես քարոզարշավին մոտ ժամանակահատվածում մեկնարկել է լուսավորման ցանցի արդիականացումը, որը ներկայացվել է որպես Միերյանի ձեռքբերում: Նույն վարչական շրջանի 4-րդ զանգվածում մեկնարկել են բակերի բարեկարգման աշխատանքները, իսկ 7-րդ զանգվածում մեծ շուքով բացվել է խաղահրապարակ, որին ներկա էր Նոր Նորքի թաղապետ Արմեն Միերյանը և հանդիսավոր բացումը կատարվել է Տիգրան Ավինյանի

[13] Նանսենի այգու լուսավորման մասին - https://www.facebook.com/watch/?v=1051133702740433

հետ միասին: Սաֆարյան փողոցից մինչև Գյուրջյան փողոցը ասֆալտապատվել է: Նոր Նորքի 3-րդ զանգվածում սկսվել են վերանորոգման աշխատանքներ տեղի պոլիկլինիկայում, որում ավելի քան 10 տարի ոչ մի աշխատանք չէր արվել:

- Մալաթիա-Սեբաստիայում ևս ակտիվորեն իրականացվել են ասֆալտապատման աշխատանքներ, շենքերի տանիքների վերանորոգում, բակերի նորոգում և ֆուտբոլի դաշտի բացում:
- Դավթաշեն վարչական շրջանի բնակիչների վկայությամբ՝ մինչև այս տարվա հուլիս-օգոստոս ամիսները բարեկարգման աշխատանքները սահմանափակվել են աղբահանությամբ, ճանապարհների մաքրմամբ, մի քանի վերելակի տեղադրումով, իսկ հուլիսի վերջին և օգոստոսի սկզբին աշխատանքները կտրուկ աճել են և ստացել մեծ ծավալներ:
- Ավանում գտնվող տարեցների ցերեկային կենտրոնի ֆեյսբուքյան էջում կատարվել է գրառում, որտեղ շնորհակալություն են հայտնում համայնքապետարանի աշխատակազմին և հատկապես Ավանի թաղապետ՝ Վահե Հակոբյանին ջեռուցման խնդիրը կարգավորելու համար:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության շտաբային հարցազրույցի ընթացքում պարզ է դարձել, որ բնակիչները գալիս են, ներկայացնում իրենց խնդիրը շտաբում, իսկ իրենք տեղում զանգահարում են թաղապետարան և արագ լուծում քաղաքացու խնդիրը: Շտաբի աշխատակցի հավաստմամբ այդպիսի դեպք օրեր առաջ է եղել՝ մուտքի պատուհան են տեղադրվել Աջափնյակի թաղապետարանի կողմից: Այսպիսի մեխանիզմով աշխատանք է գրանցվել նաև Աջափնյակ վարչական շրջանում, երբ շտաբներ դիմած քաղաքացիների խնդիրները ուղարկվել են թաղապետարան և հրահանգել արագ լուծումներ տալ: Նման պրակտիկան բացի վարչական ռեսուրսի չարաշահումից նաև պետություն-կուսակցություն սերտաճման վտանգավոր դրսևորում է:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից կազմակերպվող միջոցառումներին հաճախ ներկա են եղել վարչական, կրթական հաստատությունների աշխատողներ: Նրանց՝ մեծաքանակ խմբերով հավաքներին մասնակցության դեպքերից են.

- 09/09/2023թ.-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Ավան-Առինջի այգում տեղի ունեցած քարոզչական միջոցառման ժամանակ ներկա էին մանկապարտեզների և դպրոցների աշխատակիցներ, որոնց ներքին խոսակցություններից պարզ դարձավ, որ ստիպված են եկել՝ տնօրենների կարգադրությամբ, սակայն մասնակիցները հրաժարվել են դիտորդին ներկայացնել իրենց դպրոցների ու մանկապարտեզների համարները:
- 07/09/2023թ.-ին Նոր Նորքում նույն կուսակցության կողմից կազմակերպված հանրահավաքի ժամանակ ներկա էին համատիրությունների աշխատակիցներ, դպրոցների ու մանկապարտեզների աշխատողներ, դպրոցների ու մշակույթի տան սաներ: Այդ հանրահավաքի ժամանակ նկատվել է նաև ավտոբուսներով մարդկանց բերելու գործընթաց:
- Սեպտեմբերի 12-ին Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում տեղի ունեցած «Քաղաքացիական պայմանագրի» կուսակցության քարոզչական միջոցառմանը

(համատեղ նշվել է նաև «Զեյթունի օրը») կազմակերպված կերպով մասնակցել են Երևանի «Քանաքեռ-Զեյթունի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ի սաները: Մարզադպրոցի մարզիչը 34 մասնակից ունեցող ծնողական սոցցանցային խմբում տարածել է միջոցառման մասնակցության հայտարարությունը, նշելով, որ «ցանկալի ու պարտադիր է բոլորի ներկայությունը», իսկ միջոցառումից ժամեր առաջ ծնողներին ևս մեկ անգամ հիշեցում է ուղարկվել երեխաների միջոցառման մասնակցության մասով: Կից ներկայացվում է նամակագրությունը: Ուշագրավ է, որ մարզադպրոցի ֆեյսբուքյան էջում բազմաթիվ են «Քաղաքացիական պայմանագրի» և Տիգրան Ավինյանի քարոզչական նյութերը:[14]

- Նույն միջոցառմանը մասնակցություն ապահովելու նպատակով՝ «Անուշավան Տեր-Ղևոնդյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի 29 մասնակից ունեցող ծնողական սոցցանցային խմբում տեղադրվել է միջոցառման հայտարարությունը՝ ընդգծելով, որ երեխաների և ծնողների մասնակցությունը շատ ցանկալի է: Հայտարարության մեջ շեշտվել է, որ հայտարարությունը փոխանցվում է տնօրենի անունից:

Կարևոր է, որ ս.թ. սեպտեմբերի 6-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հանդես է եկել հայտարարությամբ, կոչ անելով ուսումնական հաստատությունները չօգտագործել քաղաքական գործընթացներում, սակայն արատավոր պրակտիկան շարունակվել է:

Ուշագրավ է նախընտրական քարոզարշավի շրջանում տարատեսակ տոնակատարությունների, համերգների կազմակերպման կտրուկ աճը, այդ թվում՝ համայնքային միջոցների հաշվին:

- Կենտրոն թաղապետարանի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի նախաձեռնությամբ մոտ 1,400 աշակերտ Կենդանաբանական այգու նվեր-տոմսեր են ստացել: Խանջյանի անվան հ. 53 դպրոցի (այստեղ է տեղակայված 9-րդ ԸԸՀ-ն) աշակերտների համար տվյալ այցելությունը կազմակերպվել է Երևան Սիթի Տուր զբոսաշրջային ավտոբուսներով:
- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Արման Բարխուդարյանի նախաձեռնությամբ կայացած հերթական միջոցառմանը, որին մասնակցում էին վարչական շրջանում բնակվող՝ սոցիալական աջակցության կարիք ունեցող, միայնակ ապրող, հաշմանդամության խումբ ունեցող անձինք(թվով 45 տարեցներ), վարչական շրջանի երեխաների և սոցիալական պաշտպանության բաժնի աշխատակիցների ուղեկցությամբ այցելելեցին Սաղմոսավանք, այնուհետև Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոն, որտեղ դիտել են «No Makeup» ներկայացումը:
- Նույն վարչական շրջանի ղեկավարը նաև Անդրանիկի 32 հասցեի վերանորոգված ֆուտբոլի դաշտում կատարված աշխատանքներին ծանոթանալիս փոքրիկների համար կազմակերպել էր մուլտհերոսների այց՝ երգ ու պարով, ուրախ խաղերով զվարճացնելու համար:

[14] https://www.facebook.com/profile.php?id=100014323969227

- Աջափնյակի Թումո այգում սեպտեմբեր 12-15-ը կազմակերպվում են բացօթյա օպերային համերգներ[15]: Այդպիսի համերգներից առաջինները հաջողությամբ կազմակերպվել էին ս.թ. հունիսին՝ Արամ Խաչատրյանի հոբելյանական միջոցառումների շարքում և սեպտեմբերին՝ երեք ամսվա ընդմիջումից հետո՝ նախընտրական ժամանակահատվածում:

Մի քանի վարչական շրջաններում իրականացվել է տոնակատարություն՝ «վարչական շրջանի տոն», որոնք նախկինում երբևէ հայտնի չեն եղել: «Ականատեսը» պաշտոնական հարցմամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ վարչական շրջանների տոնակատարության օրերը, դրանք սահմանելու իրավական փաստաթղթերը, ինչպես նաև 2018-2023թթ.-ին վարչական շրջանների օրերին նվիրված տոնակատարությունների ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Քաղաքապետարանը չի տրամադրել տոնակատարության օրերը սահմանելու վերաբերյալ իրավական փաստաթղթերը, սակայն հարցման պատասխանից պարզվել է, որ 12 վարչական շրջաններից 6-ը չունեն տոնակատարության օրեր, 3-ի՝ Աջափնյակ, Շենգավիթ և Նուբարաշենի տոները հունիսին են, և 3-ինը՝ Նորք Մարաշի, Դավթաշենի և Նոր Նորքինը՝ սեպտեմբերին: Ընդ որում, վերջին երկու վարչական շրջանների տոները առաջին անգամ կազմակերպվում են 2023 թվականի սեպտեմբերին: Սեպտեմբերի 9-ին, Նոր Նորք վարչական շրջանին նվիրված տոնակատարության կազմակերպման համար ծախսվել է նմանատիպ նախկին միջոցառումների կազմակերպման ծախսերի համեմատ մոտ 8 անգամ ավելի գումար, տոնակատարության ընթացքում ցուցադրվել է վարչական շրջանում կատարված աշխատանքները, բարեկարգումները: Չնայած, որ քաղաքապետարանի պատասխանում նշված էր, որ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը չունի տոն և ծախսեր չեն ներկայացվել, սակայն այն փաստացիորեն նշվել է սեպտեմբերի 12-ին՝ ուղեկցվելով Տ. Ավինյանի ակտիվ քարոզարշությամբ:[16]

Վարչական շրջան	Տոնակատարության ժամկետ	Տոնակատարությանը ծախսը 2023թ. սեպտեմբերին
Դավթաշեն	Առաջին անգամ՝ 2023թ. սեպտեմբեր (նախատեսված)	694,000 ՀՀ դրամ
Նոր Նորք	Առաջին անգամ՝ 2023թ սեպտեմբեր	8,770,000 ՀՀ դրամ
Նորք-Մարաշ	Հերթական տոնակատարություն՝ 2023թ. սեպտեմբեր	1,694,600 ՀՀ դրամ
Քանաքեռ-Զեյթուն	Առաջին անգամ՝ 2023թ. սեպտեմբեր	անհայտ

Կենտրոն, Նոր Նորք և Շենգավիթ վարչական շրջաններում արձանագրվել են դեպքեր, երբ թաղապետարանների աշխատակիցները և համատիրությունների ներկայացուցիչները մասնակցել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից անցկացվող

[15] https://www.facebook.com/tigran.avinyan/videos/2959009904229107/
[16] https://www.facebook.com/tigran.avinyan/videos/803200634917797/

հարցումների կազմակերպմանը՝ նրանց հրահանգավորելով քաղաքացիներին ճիշտ հարցեր ուղղելու և «Քաղաքացիական պայմանագրի» կողմը գրավելու առումով:

Վարչական ռեսուրսի չարաշահման ակնհայտ տարրեր է պարունակում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածու Տ. Ավինյանի հետևյալ հայտարարությունը[17]. «Անհուսալի պարտավորություններ ունեցող բազմաթիվ երևանցիներ (որոնց թիվը մոտ 150,000 է) դիմել են իրենց խնդրով: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հետ քննարկման արդյունքում որոշակի համաներման տրամաբանությամբ նախագիծ ենք ցանկանում մշակել, որպեսզի քաղաքացիները կարողանան թոթափել այդ բեռը, քանի որ ֆինանսական խնդիրների են բախվում»:

Դիտորդության իրականացման խոչընդոտներ

Նախընտրական քարոզչության դիտարկման շրջանակում սեպտեմբերի 6-ին «Ականատես» դիտորդական առաքելության դիտորդը հերթական շրջայցի ընթացքում այցելել է Կենտրոն վարչական շրջանի Ռուսթավելի 17 հասցե՝ ընտրողների ցուցակների ճշգրտության ստուգման նպատակով: Նույն փողոցի վրա է գտնվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական շտաբը: Դիտորդը լուսանկարել է նաև շտաբը, դրա շրջակայքում առկա քարոզչական նյութերը: Աշխատանքի ընթացքում դիտորդին է մոտեցել թիվ 11 մանկապարտեզի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սոֆիկ Կարապետյանը, ասելով, որ դիտորդն իրավունք չունի լուսանկարել շտաբը կամ հարցեր տալ հասցեների հետ կապված: Կինը վեճի է բռնվել դիտորդի հետ, խոչընդոտել է լուսանկարահանմանը, վերցրել և հրաժարվել է վերադարձնել դիտորդի՝ ԿԸՀ կողմից տրամադրված վկայականը: Կնոջը միացել են ևս երկու կին (ենթադրաբար շտաբի աշխատակիցներ), ևս վեճի բռնվել դիտորդի հետ՝ նրա իրավունքների իրացման կապակցությամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում դիտորդի իրավունքների իրականացումը խոչընդոտելու համար, ինչի վերաբերյալ հաղորդում է ներկայացվել ՀՀ դատախազություն:

Սեպտեմբերի 13-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության առաջին համար Տիգրան Ավինյանը «24 Նյուզ» լրատվական ալիքի «Հարցազրույց» հաղորդման[18] շրջանակներում մեղադրանքներ է հնչեցրել «Ականատես» դիտորդական առաքելության հասցեին, որի կողմից բացահայտվել ու հրապարակվել են քարոզարշավի մի շարք խնդիրներ, այդ թվում՝ վարչական ռեսուրսի չարաշահումների դրվագներ: Մասնավորապես՝ նա «Ականատես»-ին մեղադրել է «մանիպուլյացիայի», «իրականությանը չհամապատասխանող» :տվյալներ հրապարակելու մեջ: Նա նշել է, որ «Ականատես»-ի անաչառության առումով առկա են «լուրջ և խորքային խնդիրներ», որ ինքը «կասկածում է» առաքելության տրամաբանությանը, անաչառությանը, ինչպես նաև հարցականի տակ է դրել դիտորդական կազմակերպությունների

[17] Տիգրան Ավինյանի հայտարարությունը պարտավորությունների համաներման մասին - https://www.facebook.com/tigran.avinyan/posts/817580676637806/?vh=e&extid=MSG-UNK-UNK-UNK-AN_GK0T-GK1C
[18] Հարցազրույց Տ. Ավինյանի հետ, 13/09/2023, 15:35-21:06 րոպեներ - https://www.youtube.com/watch?v=d8nvBway6tc

ֆինանսավորման աղբյուրները: Հիմք ընդունելով այդ ամենը, նա առաջարկել է «Ականատեսի» անունն իր մոտ չտալ:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու թեկնածու Գնել Սարգսյանը սոցիալական ցանցի իր էջում, որտեղ ունի շուրջ 50,000 հետևորդ և ընկեր, ագրեսիվ ու հայհոյախառը գրառում է արել՝[19] ի արձագանք «Ականատես» դիտորդական առաքելության բացահայտումների:

Հաղորդումներ՝ ուղղված իրավապահ մարմիններին

Դիտորդական առաքելության կողմից արձանագրվել է առերևույթ քրեաիրավական բնույթի խախտումների 3 դեպք, որոնց վերաբերյալ ներկայացվել են հանցագործության մասին հաղորդումներ ՀՀ գլխավոր դատախազություն: Դրանք վերաբերել են.

- կուսակցության շտաբի ներկայացուցիչների կողմից դիտորդի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելուն (ՀՀ քրեական օրենսգրքի 210 հոդված),
- կուսակցությունների կողմից գումարի դիմաց անձանց իրենց քարոզարշավին, երթերին ներգրավելուն կամ դրոշակներ պահելուն (ՀՀ քրեական օրենսգրքի 211, 236 հոդվածներ),
- կուսակցության կողմից «նվեր-քարտեր» բաժանելուն (ՀՀ քրեական օրենսգրքի 221/219 հոդված):

Դիտորդական առաքելության մասին

«Ականատես» դիտորդական առաքելությունը հիմնվել է 2018թ. Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության, «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» (ԺԱԱ) հասարակական կազմակերպության, «Ռեստարտ» գիտակրթական հիմնադրամի և Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի կողմից:

«Ականատեսի» նպատակն է նպաստել հանրային անկողմնակալ հսկողության միջոցով նպաստել ազատ և արդար ընտրությունների անցկացմանը, ընտրական գործընթացների օրինավորությանը: «Ականատեսը» գործում է անկախ՝ պահպանելով անկողմնակալության սկզբունքը և վերծ մնալով այնպիսի գործողություն կատարելուց, որը կարող է մեկնաբանվել որպես աջակցություն, քարոզչություն կամ հակաքարոզչություն ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին կամ դեմ:

[19] Գնել Սարգսյանի գրառումը՝
https://www.facebook.com/gnel.sargsyan.18/posts/pfbid021NqrxrhLB3N7XFmkVq8hGtA1uTHTcQRSpLFAkBZdToVAU1NLE9HEGLnygfGY2KSVl